ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՍՓՅՈՒՌՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՊՀ երկրների ինստիտուտի Հայաստանյան մասնաճյուղը հայտարարում է հետազոտական, նորարական, կիրառական աշխատանքների մրցույթ ուսանողների համար (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) հետևյալ ուղղություններով։

- ՀՀ, ԱՊՀ և Եվրասիական ինտեգրման գործընթացներ (նպատակը, մարտահրավերները և զարգացման հեռանկարներ),
- Տարածաշրջանի երկրների փոփոխվող քաղաքականությունը Անդրկովկասի վերաբերյալ և Հայաստանի հնարավոր արձագանքի,
- Հայաստանի անվտանգային նոր մարտահրավերներ և դրանց հնարավոր լուծման ուղիները։
- Հայաստանի և ՀԱՊԿ անդամակցող երկրների ընդհանուր մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները,

Աշխատանքի կառուցվածքի պարտադիր պայմանները

- Վերնագիրը պետք է համապատասխանի աշխատանքի բովանդակությանը,
- Հիմնավորվի տվյալ հետազոտության արդիականությունը,
- Աշխատանքում պետք է ձևակերպված լինեն իրատեսական նպատակը, խնդիրները և առաջարկները,
- Աշխատանքը պետք է ունենա հիմնավորված արդյունքներ և կիրառական նշանակություն
- Արդիական և նորարարական գաղափարներով 3 լավագույն աշխատանքների հեղինակները կպարգևատրվեն մրցանակներով (առաջին մրցանակ՝ 150.000 դրամ, երկրորդ մրցանակ՝ 100. 000 դրամ, երրորդ մրցանակ՝ 75. 000 դրամ)։
- Մրցույթին կարող են մասնակցել ինչպես անհատ ուսանողներ, այնպես էլ ուսանողների խմբեր։ Առաջարկություններն ընդունվում են հայերեն կամ անգլերեն և ռուսերեն լեզուներով։
- Աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի 6 էջը (2 սմ լուսանցքային կողմերով, A4 ձևաչափով, 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի Unicode տառատեսակով, օրինակ՝ «Sylfaen»՝ հայերենը, անգլերենը և ռուսերենը «Times New Roman»)։
- Ներկայացվող առաջարկին հարկավոր է կցել նաև մասնակցի (մասնակիցների) համառոտ ինքնակենսագրությունը (CV) (ոչ ավել քան 1 էջ) և ուղարկել armeniacis.institute@gmail.com հասցեին՝ մինչև **2017թ. հոկտեմբերի 25-ը** ներառյալ։ Աշխատանքը ուղարկելիս նամակի վերնագիրը անհրաժեշտ է նշել «ուսանողական մրցույթ»։
- Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 093790335 հեռախոսահամարով։